տալիս և նուիրում «ի բնիկն Իւրեանց ի գերապանծ արքայանիստն Դեղամի, որ է Դառնի, յորում հրաշակերտ հովանոցն է յարդարեալ հաստահեղոյս քարամբք ի սքաւսանս թագաւորաց եւ թագուհեաց։ Եւ աւանդեն զսա մեծափառ կաթուղիկէին, տալով ի ձեռս սպասաւորաց նորին սրբասէր քահանայից...»։ Ձեռագրի սկզբնաւորութիւնը եղել է «ի գերադրական սբ. ուխտին, որ կոչի Այրից վանք (պատկ. 151), որ է բանակեալ լուսակիր արանց եւ կացորդ լուսաւորչացն նախնեաց». վերջաւորութիւնը Դեղձանայ վանքում ՈԿԶ թուին, «առ ոտս մեծ հեղինակիս Կարապետիս եւ այլ սրբոց միաբանացս»(*)։


խաղողոյ. որ ուրախ
առնէ զսատաց ողս ն
և յսմ գործ առնաս
թէ բ պուղոյ, սկիզբն է
ղև ի գերադրական սբ
ուխտին. որ կոչի այրից
վանք, ուր բանակեալ ղ.
լուսակիր արանց, և
կացորդ լուսաւորչացն
նախնեաց։

Պատկեր 151.

Աւետարանը մեծադիր է՝ 29 × 22սմ., արևելեան խոշոր բոլորգրով (պատկ. 151), թղթի վերայ, զարդարուած իւրատեսակ խորաններով (պատկ. 152), աւետարանիչների պատկերներով և լուսանցքի զարդերով, տարաբաղդաբար խոնաւութիւնից վնասուած կամ ներկերը թափուած շատ տեղ. իսկ աւետարանիչներն էլ պոկուած, բացառութեամբ Ղուկասի (պատկ. 153) և Յովհաննու սկզբնազարդի (պատկ. 154), որի կամարի տակ նստած է Պրուխորոնը գրիչը ձեռին։ Արուեստի բնոյթն ու տեխնիկան զուտ արևելեան, տարբեր մեր Կիլիկեան կամ Բիւզանդական մանրանկարչութիւնից. ոչ ճոխ, առանց ոսկու գործածութեան և պարզ, բայց հետաքրքրական գիտական տեսակէտով։ Աւելի մեծ աղերս է նկատւում ոճի և մոտիւների կողմից սասանեան–արևելեան հայկական հին աւանդների հետ, որոնք ապրում են մինչև ԺԳ. դարը և յետոյ, արաբական–սելջուկեան և հայ ժողովրդական (պատկ. 152) (զորգագործական) արուեստների հետ. այսպէս են վիզերն իրար փաթաթած և պոչերը վեր ցցած սիրամարգները երկու սիւների վերայ հաստատուած խորանի կամարի տակ, թռչուններ և կենդանիներ խորանների գլխին, լայնատերեւ պալմետներ տերեւի ճիւղաւորութեան կեդրոնում կարմիր գնդակով կամ զուգահեռ տերեւներով (պատկ. 155, 156, 157), պարզ հիւսկէններ լուսանցքի զարդերի մէջ, ութաձեւեր, կանթեր կամ օղակներ մանրանկարչական տառերի մէջ (պատկ. 158)։ Խորանների սիւները պարզ հայկական են, փայտի սիւների հետեւողութեամբ, խարիսխները եռաստիճան, լայնքից դէպի նեղը բարձրանալով, իսկ խոյակները տախտակի վերայ կիսաբոլոր բարձով։ Սիրուած գոյներն են կապոյտը և կարմիրը, ապա քիչ չափով մոյգ կանաչն ու դեղինը, վերջինը լուսոյ պսակների համար եւս գործադրուած։ Նկարիչն է Սարգիս, գրիչը Աբէլ, իսկ կազմողը Ստեփանոս։

III

Վանքի պատմութեան երրորդ եւ աւելի փառաւոր ժամանակը Պռոշեանց տիրապետութեան շրջանն է. մենք ցոյց ենք տուել, որ ԺԴ. դարի քառասնական թուականներին Պռոշ մեծ իշխանը դնել է այդ վանքը Իւանէ աթաբակի որդի Աւագից իւր տոհմի համար գերեզմանատուն դարձնելու նպատակով(*)։ Պռոշեանց շրջանի թուականով արձանագրութիւններն սկսւում են միայն յիսունական թուականների վերջերից. վանքում մնուած միաբաններից մէկը՝ Զաքարէ 1257 թուին նորոգել է քարայրի Աստուածածինը.

Ի թուիս ՉՉ.

Ես Զաքարէ մնեալ ի սբ. Ա.Ծայծն|իս (s!) նորոգեցի զԱ.Ծածինս ի հալալ | արդեանց իմոց եւ գնեցի զդատաւորին հողն :Ի: դահեկան եւ զխոզայ Խայտերն Արթզոյ ի Հասանայ :Խ: դահեկան եւ եռու ընծայք սբ. Ա.Ծայծնիս եւ սպ|ասաւորքս խոստացան :Բ: աւր ժամ :Ա: ինձ :Ա: Մամքանայ ով (? մաշուած) որ զ|այս հայրենիքս այս եկեղեց|ոյս հանեսցէ :ԺԸ: (այսինքն ՅԺԸ) հայրապետ|աց նզոված է։

(*) Ձեռ. Տաթեւի, այժմ Էջմ. № 4509. Յաւել. Բ. 45։

(*) Խաղբակեանք, 102 և շար.։ (Յաւել. Ա. 17, պատկ. 30, և Ա. 16, պատկ. 29)։